

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒԷՄԻ 13-ԻՆ ԼՈՆԴՈՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՆՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՐԿՆԱԿԻ ՆԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՆԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 հոկտեմբերի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Գ.Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հուլիսի 13-ին Լոնդոնում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Մեծ Բրիտանիայի եւ Նյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջեւ եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դափարան՝ մուրքագրված 02.09.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՆ Ֆինանսների նախարարի փեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով կոնվենցիան, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Նայասպանի Նանրապետության կառավարության եւ Մեծ Բրիտանիայի եւ Նյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիան ստորագրվել է 2011 թվականի հուլիսի 13-ին՝ Լոնդոնում:

Կոնվենցիան բաղկացած է 30 հոդվածներից եւ Կոնվենցիայի անբաժանելի մասը կազմող արձանագրությունից, որն ստորագրվել է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի եւ 11-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները պարզաբանելու եւ լրացնելու նպատակով:

2. Կոնվենցիայի կնքման նպատակն է բացառել եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը եւ այդպիսով նվազեցնել նշված հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցությունը միջազգային առևտրի եւ ներդրումների վրա եւ սրեղծել կանխաբեսելի ու կայուն հարկային դաշտ:

3. Կոնվենցիան նախատեսում է հարկումից խուսափելը կանխելու մեխանիզմ, երաշխավորում է պայմանավորվող պետությունների ազգային անձանց նկատմամբ հարկային խտրականության բացառում՝ կոնվենցիայում ներառված հարկերի առնչությամբ:

4. Կոնվենցիայի կնքումը հնարավորություն կտա զարգացնելու երկու պետությունների միջև ապրանքների եւ ծառայությունների շրջանառությունը, կապիտալի, փեխնոլոգիաների, մարդկանց շարժը, կնպաստի փոփոխական կապերի զարգացմանը:

5. Կոնվենցիայով Նայասպանի Նանրապետությունը կրում է որոշ ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Նայասպանի Նանրապետությունը պարտավորվում է Մեծ Բրիտանիայի եւ Նյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության ռեզիդենտների կողմից Նայասպանի Նանրապետությունում ստացված որոշ փաստի եկամուտները չհարկել կամ հարկել նվազեցված դրույքաչափերով:

6. Կոնվենցիայում ամրագրված դրույթները համահունչ են ՆՆ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հուլիսի 13-ին Լոնդոնում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Մեծ Բրիտանիայի եւ Նյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջեւ եկամուտների եւ կապիտալի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴՈ- 994